



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 սեպտեմբերի 2017 թվականի N 208-Ա

**ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 426-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջեից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կարիքների համար հատկացված միջոցների հաշվին կառուցված և վերանորոգված օբյեկտներն ընդունելու և շահագործման հանձնելու նպատակով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1) *Տարոն Գևորգյան* - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

2) *Ալեքսան Եղիշյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ,

3) *Երվանդ Հակոբյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,

4) *Արամ Վիրաբյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ:

2. Հանձնաժողովում ընդգրկել նաև կապալառու, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցիչներին (*համաձայնությամբ*), համապատասխան համայնքների և շահագրգիռ կազմակերպությունների ղեկավարներին:

3. Հանձնաժողովին՝ տեղում ուսումնասիրել ավարտված շինարարական օբյեկտների համապատասխանությունը հաստատված նախագծային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ներկայացնել *համապատասխան ակզ:*

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2017 թվականի սեպտեմբերի 28
ք. Հրազդան



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ